

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Նշանավոր հայագետ, բյուզանդագետ ու աղբյուրագետ Հրաչ Բարթիկյանը (1927-2011) «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ» մատենաշարով հրատարակել է բյուզանդական հեղինակներ Պրոկոպիոս Կեսարացու, Կոստանդին Ծիրանածինի, Հովհաննես Սկիլիցեսի, Թեոփանոս Խոստովանողի և Թեոփանեսի Շարունակողի աշխատությունները, որոնք հարուստ նյութ են պարունակում Հայաստանի ու հայերի մասին:

Միջնադարյան Հայաստանի ու Բյուզանդիայի պատմությանը խոր քաջատեղյակ և հին հունարենին հրաշալի տիրապետող Հրաչ Բարթիկյանը դրանք օժտել է տվյալ հեղինակի շարադրած պատմաշրջանի ու աշխատության նյութի շահեկան քննությամբ և սպառիչ ծանոթագրություններով: Դրա շնորհիվ դյուրացել է ոչ միայն սովորական, այլև մասնագետ ընթերցողի կողմից տվյալ հեղինակի հաղորդածի ճիշտ ու լիարժեք ընկալումը:

Ոչ միայն Բյուզանդիայի, այլև տարածաշրջանի, այդ թվում Հայաստանի XI դ. երկրորդ կեսի պատմության մասին ուշագրավ, ինչպես նաև այլ սկզբնաղբյուրներում չհանդիպող զգալի տեղեկություններ պարունակող Միքայել Ատտալիատեսի «Պատմության» հայերեն թարգմանությունը Հրաչ Բարթիկյանը կատարեց կյանքի մայրամուտին, խաթարված առողջությամբ, բայց իրեն բնորոշ տքնաջանությամբ ու բարեխղճությամբ: Նա թարգմանությունն օժտեց մանրամասն ծանոթագրություններով, բայց չնայած տողերիս հեղինակի պնդում-հորդորներին, համառորեն հրաժարվեց գոնե կարճառոտ առաջաբան-ուսումնասիրություն գրելուց: Իր հրաժարումը երջանկահիշատակ ակադեմիկոսը փաստարկում էր թե հոգնածությամբ և թե նրանով, որ Միքայել Ատտալիատեսի նկարագրած պատմաշրջանի քննությանը հանգամանալից անդրադարձել է Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտագրություն պատմությանց» երկի հայերի թարգմանության առաջաբան-ուսումնասիրությունում և չի ուզում կրկնորդել:

«Սկզբնաղբյուրը երբեք չի՝ հնանում», - սիրում էր փաստել Հրաչ Բարթիկյանը: Այս անվիճելի պնդումը վերաբերում է նաև Միքայել Ատտալիատեսի «Պատմությանը», որը Հայաստանի սելջուկյան արշավանքների շրջանի պատմության կարևոր սկզբնաղբյուր է:

Հրատարակչական խմբագիր

